ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբեր 2026թ. ՆՄՈ/289-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ՄՈ/739-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2026 թվականի մայիսի 25-ի N95/7 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017թ. մայիսի 15-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման պլանը հաստատելու մասին N191 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/739-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված հավելվածներում «Խոյ» բառը բոլոր հոլովվածներով փոխարինել «Վաղարշապատ» բառով՝ բոլոր հոլովվածներով.

2) որոշման հավելվածներում «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն» (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ) և «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամայն կառավարման կենտրոն» (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ) բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոն» (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ 112 ՕԿԿ) բառերով.

3) որոշմամբ հաստատված պլանի հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն 1-ին հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՍԽԵՄԱ
«ԱՐՏԱՔԻՆ ԴԱՇՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՒՏՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ